



Civil Society Institute
non governmental organization, Armenia



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Փարիզ – Երևան, մարտ 2010 թ.

2010թ. ապրիլի 6-8 Երևանում կայանալիք «Արդարադատություն. Անկախ դատարանի առջև արդյունավետ պաշտպանության իրավունք. Նոր մարտահրավերներ» Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի (FIDH) և իր անդամ կազմակերպության՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտ (ՔՀԻ) հկ–ի կողմից կազմակերպվող ֆորումի նախօրեին, FIDH–ը՝ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի, Հայաստանի Հելսինկյան կոմիտեի, Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի և Ընդդեմ իրավական կամայականության հիմնադրամի հետ համատեղ, ևս մեկ անգամ ցանկանում են արտահայտել իրենց մտահոգությունները Հայաստանի Հանրապետությունում արդարադատության համակարգի աշխատանքի վերաբերյալ:

Մեր կազմակերպությունները արտահայտում են իրենց մտահոգությունը արդար դատաքննության իրավունքի տարբեր ոտնահարումների կապակցությամբ, որոնք արձանագրվել են Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիների ընթացքում, այդ թվում նախնական կալանքի լայն կիրառումը, անմեղության կանխավարկածի ոտնահարումը, պաշտպանության իրավունքը: Արձանագրվել են դատավորների կողմնակալության մի շարք դեպքեր, մասնավորապես 2008–ի մարտի դեպքերից հետո կալանավորված ընդդիմության առաջնորդների դատավարությունների ընթացքում: Ավելին, արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբորպես մեղադրանքի հիմք օգտագործվել են անօրինական ճանապարհով խոշտանգումների միջոցով ձեռք բերված ապացույցներ: Մեր կազմակերպությունները նշում են, որ խոշտանգումները և դաժան վերաբերմունքը դեռևս կիրառվում են ոստիկանության կողմից և հաճախ ազատագրվման պայմանները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին և ազգային օրենսդրությանը: «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների» աշխատանքի ոչ բավարար թափանցիկությունը, ինչպես նաև անչափահասների արդարադատության առանձին համակարգի բացակայությունը նույնպես ներառված է մտահոգությունների շարքում:

Մեր կազմակերպությունները հիշեցնում են, որ Արդարադատությանը նվիրված ֆորումը, որին աջակցում ու մասնակցում են այնպիսի միջազգային փորձագետներ ինչպիսիք են Միջազգային քրեական դատարանի (ICC) դատախազ Լուիս Մորենո Օկամպոն և այլ հեղինակավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, բացառիկ հնարավորություն է ընձեռում Հայաստանին՝ բարելավելու արդարադատության իր համակարգը: Այս իրադարձությունը կարող է նաև առիթ հանդիսանալ, որպեսզի Հայաստանի Հանրապետությունն ամրապնդի դրական զարգացումները միջազգային ոլորտում և վավերացնի Քաղաքացիական և քաղաքացիական իրավունքների միջազգային

դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրությունը, օրինակելի դառնալով միջազգային հանրության և հատկապես տարածաշրջանի համար:

2008 թ. մարտի մեկի դեպքերի քննությունը

2008 թ. մարտին նախագահական ընտրություններին հաջորդող ցույցերի ընթացքում՝ իրավապահների կողմից ուժի չափազանց կիրառման հետևանքով, բախումներ տեղի ունեցան ոստիկանության և ընդդիմության միջև, որոնք հանգեցրին զանգվածային ձերբակալությունների և կալանավորումների: Տաս մարդ զոհվեցին և երկու հարյուր մարդ տարբեր տեսակի վնասվածքներ ստացան բախումների արդյունքում: 2008 թ-ի մարտի 2 –ին քրեական գործեր հարուցվեցին ՀՀ Քրեական օրենսգրքի 225 հոդվածի 3–րդ մասի հատկանիշներով (Չանգվածային անկարգություններ զուգորդված սպանություններով): Թեպետ այս հոդվածը փոփոխությունների ենթարկվեց և դրա երրորդ մասը ապաքրեականացվեց 2009 թ-ի մարտին, քննությունը վերսկսվեց ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի հատկանիշներով (Սպանություն): Քննությունը հիմնականում կենտրոնացած էր ցույցերի կազմակերպիչների վրա: Իշխանությունները այդպես էլ չպարզեցին տաս զոհերի մահվան հանգամանքները և մեղավորները մինչ օրս անպատիժ են մնում: Չնայած այն բանի, որ քննչական մարմինները շարունակում են քննությունը, հարցաքննում են վկաներին, քայլեր են ձեռնարկում ականատես վկաներին պարզելու ուղղությամբ և հրահանգներ են տրվել իրավապահ մարմիններին ակտիվացնել քննչական և օպերատիվ գործողությունները, մինչ օրս ոչ ոք պաշտոնապես չի մեղադրվել տաս մահվան դեպքերի համար: Այսօր բացակայում է հանրության վստահությունը քննություն իրականացնող մարմինների հանդեպ՝ քննության թափանցիկության և անկախության բացակայության պատճառով: Դրա վառ ապացույցն է այն, որ 2008 թ. հոկտեմբերի 23–ին ՀՀ Նախագահի կողմից նշանակված փաստահավաք խումբը լուծարվեց 2009 թ. հունիսի 6–ին՝ առանց արժեքավոր ներդրում ունենալու իրականացված քննությանը:

2008 թ. մարտի 1–ի դեպքեր՝ քաղաքական բանտարկյալներ և արդար դատաքննության իրավունքը

Ավելի քան հարյուր ընդդիմադիրներ կալանավորվել և դատարանի առաջ են կանգնեցվել մարտի մեկի դեպքերից հետո: Նրանց հիմնական մասը մեղադրվել է կեղծ մեղադրանքների հիման վրա և դատապարտվել քաղաքականացված դատավարությունների արդյունքում: Դատավարությունների ժամանակ ներկայացված մեղադրանքները հիմնված էին ՀՀ Քրեական օրենսգրքի 225 (Չանգվածային անկարգություններ) և 316 (Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը) հոդվածներին:¹ 2010թ-ի մարտի 8–ին հրապարակված ԵԱՀԿ/ԺՄԻԳ–ի Հայաստանում Դատավարությունների դիտարկում (Սպրիլ 2008- Հուլիս 2009) ծրագրի Վերջնական զեկույցում մատնանշված են մի շարք թերություններ արդարադատության

¹ Արդար դատաքննության իրավունքի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում՝ Նախնական եզրակացություններ 2008թ. մարտի գործերով դատավարությունների դիտորդության և օրենսդրական վերջին փոփոխությունների հիման վրա, FIDH և ՔՀԻ, 2009 հունիս, <http://www.fidh.org/FIDH-CSI-Joint-Position-Paper-on-the-right-to-a>, էջ 2

համակարգում, մասնավորապես «ազատության իրավունքը, հրապարակային դատաքննության իրավունքը, անմեղության կանխավարկածը, կողմերի հավասարությունը, մրցակցային դատավարությունը ինչպես նաև ոստիկանական ցուցմունքների վրա չափից ավելի հիմնվելը, ցուցմունք տալու հարկադրանքից ազատ լինելու իրավունքը և անօրինական միջոցներով ստացված ապացույցը չօգտագործելը, ինքնուրույն կամ պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը, արագացված դատաքննությունը, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, դատավորների անկողմնակալությունը և մասնագիտական վարքագիծը»:² Չնայած քաղաքական բանտարկյալներից շատերն ազատ արձակվեցին 2009-ի հունիսի 19 -ին Հայաստանի Ազգային ժողովի կողմից Համաներման որոշումը հաստատելու հետևանքով, սակայն ավելի քան տաս քաղաքական բանտարկյալներ մնում են անազատության մեջ:

Նախնական կալանքի կիրառման չարաշահումներ

Ստացված տեղեկությունների համաձայն, ձերբակալության և կալանավորման որոշումները, որոնք պատշաճ չեն գրանցվել, հաճախ հակասել են միջազգային չափանիշներին և ազգային օրենսդրությանը: Նախնական կալանքը կիրառվել է ոչ թե որպես բացառություն այլ լայնորեն օգտագործվել է առանց համապատասխան իրավական հիմքերի: «Նախնական կալանքի կիրառումը չպետք է հիմնավորվի մեղսագրվող արարքի ծանրությամբ (...): Ձերբակալության և կալանավորման նկատմամբ անկախ դատական վերահսկողությունը հատկապես կարևոր է ազատագրվման օրինականությունը երաշխավորելու համար: Այս առումով, ծրագրի իրականացման ընթացքում պարզվել է, որ Հայաստանի դատական համակարգը չի իրականացնում այն գործառույթները, որոնք անհրաժեշտ են նման դատական վերահսկողություն ապահովելու համար՝ սա մասնավորապես վերաբերում է ձերբակալության հիմքերի և կալանավորման որոշումների դատական վերահսկողությանը»:³

Կողմնակալ դատական համակարգ՝ անմեղության կանխավարկածի և պաշտպանության իրավունքի ոտնահարում

Պարբերաբար ստացվել են տեղեկություններ անմեղության կանխավարկածի սկզբունքը խախտելու վերաբերյալ: Տեղական ՀԿ-ների և ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ի դիտորդական առաքելության համաձայն, երբեմն դատավորները հակված են եղել դրսևորել անհավասար վերաբերմունք կողմերի նկատմամբ՝ ցուցաբերելով ակնհայտ բարյացակամ վերաբերմունք մեղադրող կողմի և ակնհայտ թշնամական վերաբերմունք պաշտպանության կողմի նկատմամբ, ինչը դատարանի առջև կողմերի հավասարության սկզբունքի ակնհայտ խախտում է:

Ավելին, դեպքերից շատերում առավելությունը տրվում էր ոստիկանների տված ցուցմունքներին, մինչդեռ պաշտպանական կողմը երբեմն զրկված էր լինում իր իրավունքներից: «Որոշ դեպքերում պաշտպանները զրկված էին պաշտպանությունը պատրաստելու հնարավորությունից: Մի շարք պաշտպաններ ստիպված էին լինում լքել դատական նիստերի դահլիճն ի նշան բողոքի: Մտահոգություն են առաջացրել նաև

² Դատավարությունների Դիտարկման ծրագիր (Ապրիլ 2008- Հուլիս 2009), ԵԱՀԿ/ԺՄԻԳ, 2010 մարտ

³ Դատավարությունների Դիտարկման ծրագիր (Ապրիլ 2008- Հուլիս 2009), ԵԱՀԿ/ԺՄԻԳ, 2010 մարտ, էջ 26

հանրային պաշտպանների տրամադրած պաշտպանության որակը և արդյունավետությունը»:⁴

Մեր կազմակերպությունները նաև հիշեցնում են, որ Հայաստանի Դատական և Քրեական Դատավարության օրենսգրքերում 2009 թ. մարտին ուժի մեջ մտած փոփոխությունները վտանգի տակ են դնում իր ներկայացույցամբ քննվելու մեղադրյալի իրավունքը:

Խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերը

2003 թ. ընդունված Քրեական օրենսգիրքը խոշտանգումները քրեականացնող հոդվածներ է պարունակում: Սակայն Քրեական օրենսգրքի 119 և 341 հոդվածները չեն համապատասխանում 1993-ին Հայաստանի կողմից վավերացված ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի հոդված 1-ով նախատեսված խոշտանգումների սահմանմանը: Մասնավորապես, 119 հոդվածը (Խոշտանգումը) չի մատնանշում, որ անօրինական գործողությունները կատարվել են պաշտոնատար անձի կողմից: Իսկ 341 հոդվածը (Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի կողմից ցուցմունք տալուն հարկադրելը) չի ապահովում պատասխանատվություն նման գործողություններին անուղղակիորեն մասնակցելու համար, մասնավորապես՝ նրանց իմացությամբ, հրահրմամբ կամ լռելյայն համաձայնությամբ: Բացի այդ, ՀՀ Քրեական օրենսգրքով նախատեսված «խոշտանգումը» դասվում է միջին ծանրության հանցանքների շարքին, ինչը հակասում է միջազգային չափանիշներին: Ավելին, 119 և 341 հոդվածների համար նախատեսված են վաղեմության ժամկետներ, ինչը նույնպես հակասում է միջազգային օրենսդրությանը:

Պարբերաբար ստացվում են տեղեկություններ ոստիկանությունում և քրեակատարողական հիմնարկներում դաժան վերաբերմունքի և խոշտանգումների կիրառման վերաբերյալ, ինչը նույնպես առաջացնում է լուրջ մտահոգություններ:

Այսպիսով, Հելսինկյան ասոցիացիայի ֆոտոլրագրող Արշալույս Հակոբյանի դեպքը հատկանշական է այս առումով: FIDH -ի նախագահ Սուեր Բելասենը և ՔՀԻ-ի նախագահ Արման Դանիելյանը 2009 թ. հունիսի 26-ին այցելեցին Արշալույս Հակոբյանին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Այցի ընթացքում նրանք տեղեկացան, որ Արշալույս Հակոբյանը ենթարկվել էր դաժան վերաբերմունքի ձեռքակալության ընթացքում, ոստիկանության բաժնում: ⁵ Հիշեցնենք, որ 2009-ի մայիսի 31-ին, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ Արշալույս Հակոբյանը դիտորդական առաքելություն է իրականացրել մի խումբ դիտորդների հետ: Որպես Հելսինկյան ասոցիացիայի դիտորդ, պրն. Հակոբյանն այլ դիտորդների հետ միասին

⁴ Դատավարությունների Դիտարկման ծրագիր (Ապրիլ 2008- Հուլիս 2009), ԵԱՀԿ/ԺՄԻԳ, 2010 մարտ, էջ 7

⁵ Իրավապաշտպանների պաշտպանության օբսերվատորիայի, Քաղաքացիական հասարակության ինստիտուտի, Հելսինկյան քաղաքացիական անսասմբլեայի Վանաձորի գրասենյակի, Հայաստանի Հելսինկյան կոմիտեի, Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի և Ընդդեմ իրավական կամայականության հիմնադրամի համատեղ հայտարարություն, <http://www.fidh.org/ARMENIA-Deep-concern-over-ill-treatments-against>

այցելել է Մալաթիա-Սեբաստիա համայնքի N 8/23 ընտրական տեղամաս, որտեղ ընտրական հանձնաժողովի անդամները և նախագահը խոչընդոտել են նրանց աշխատանքին՝ թույլ չտալով իրականացնել դիտորդական առաքելություն: Խմբին տեղամասից դուրս են հրավիրել, փակել դռները և սպառնացել ֆիզիկական ուժ գործադրել: Միջադեպից հետո պրն. Հակոբյանը բողոք է ներկայացրել Հատուկ քննչական ծառայություն: 2009թ. հունիսի 5-ին նա կանչվել է ոստիկանություն՝ վկայություն տալու համար, սակայն հրաժարվել է գնալ, պնդելով, որ կայցելի ոստիկանություն միայն այն դեպքում, երբ իրեն առձեռն ծանուցագիր կհանձնեն: Ավելի ուշ, երկու ոստիկան ծանուցագրով գնացել են Հակոբյանի բնակարան:

«Ծանուցագրում», սակայն, նշված չի եղել քրեական գործի մասին որևէ տեղեկություն կամ իրեն կանչելու պատճառը: Հակոբյանը հրաժարվել է ստորագրել թուղթը՝ պնդելով, որ այն օրինական չէ: Մակայն ոստիկանները, ճնշում գործադրելով, կարողացել են հարկադրել նրան ստորագրել: Չնայած Հակոբյանի պահանջներին լքել իր բնակարանը, ոստիկանները լրացուցիչ օգնություն են կանչում և Հակոբյանին բերման են ենթարկում Երևանի ոստիկանության Կենտրոնի բաժին, որտեղ նրան ենթարկում են ծեծի և այլ դաժան վերաբերմունքի: Այնուհետև, նրան ձեռնաշղթաներով տանում են Կենտրոնի քննչական բաժին, ապա մեղադրանք են առաջադրում ՀՀ Քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով. «Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը»: 2009թ. հունիսի 6-ին Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել որպես խափանման միջոց Հակոբյանի նկատմամբ կիրառել կալանավորում: Հոկտեմբերի 16-ին, Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանը որոշում կայացրեց փոխարինել կալանքը որպես խափանման միջոց չհեռանալու մասին ստորագրությամբ:

Իսկ 2010 թ. փետրվարի 5-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն ապացույցների բացակայության պատճառաբանությամբ արդարացման դատավճիռ կայացրեց պարոն Արշալույս Հակոբյանի նկատմամբ: Մեր կազմակերպությունները ողջունել էին այդ որոշումը, սակայն կոչ էին արել դաժան վերաբերմունքի դեպքի առիթով իրականացնել լիարժեք և արդյունավետ քննություն:⁶

Անօրինական միջոցների կիրառմամբ՝ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի միջոցով ստացված ապացույցներ

Վերջին տարիներին տեղեկություններ են ստացվել խոշտանգումների և դաժան վերաբերմունքի միջոցով ցուցմունքներ ստանալու պրակտիկայի վերաբերյալ: Սա վերաբերվում է նաև քաղաքական դատավարություններում ներգրավված վկաներին, մասնավորապես վեց ընդդիմադիր գործիչների նկատմամբ դատավարությունների ընթացքում, ովքեր ձերբակալվել և կալանքի էին վերցվել 2008 թ. մարտին ցույցերից հետո ինչպես նաև տուժողներին կամ վկաներին Լևոն Գուլյանի և Մաշա Դավթյանի

⁶ Իրավապաշտպանների պաշտպանության օբսերվատորիայի, Քաղաքացիական հասարակության ինստիտուտի, Հելսինկյան քաղաքացիական անսամբլեայի Վանաձորի գրասենյակի, Հայաստանի Հելսինկյան կոմիտեի, Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի և Ընդդեմ իրավական կամայականության հիմնադրամի համատեղ հայտարարություն, <http://www.fidh.org/Acquittal-of-human-rights-defender-Arshaluys>

գործերում:

Վկաներից ճնշումների արդյունքում ստացված ցուցումները

Ընդդիմադիր վեց առաջնորդների դատաքննությունների ընթացքում մի շարք վկաներ հայտնել էին դատարանին թե ինչպես են իրենցից մեղադրվող ընդդիմադիրների դեմ ցուցումներ կորզել նախնական քննության ընթացքում: Նրանք հայտնել են, որ վկաներից շատերը ենթարկվել են լուրջ հոգեբանական և ֆիզիկական ճնշումների ոստիկանության կողմից: Օրինակ՝ Սասուն Միքաելյանի գործով անցնող վկա Յաշա Մելքոնյանը 2009 թ. մայիսի 6-ին դատարանում ասաց՝ «ես նախաքննության ընթացքում սուտ եմ գրել: Ներողություն եմ խնդրում դրա համար: Ես շատ վատ վիճակում էի, ասում էին գրի, գրում էի, մենակ թողնեն գնամ մի տեղ պառկեմ: Մեռնում էի ցավից: Շատ բան քննիչներն են թելադրել»: Այս վկան հայտարարել է, որ իրեն ծեծել են Հրազդան քաղաքի ոստիկանությունում դիմակավոր անձինք, քրեական բաժնի պետ Սերգեյ Մարկոսյանի գլխավորությամբ:⁷ Ավելին, որոշ վկաներ հայտնում էին, որ դատական նիստերից առաջ իրենց կանչում էին ոստիկանություն և պարտադրում, որ նրանք դատարանում պնդեն իրենց նախաքննական ցուցումները:⁸

Լևոն Գուլյանի գործը՝ վկայի մահվան դեպք ոստիկանությունում

Լևոն Գուլյանի գործը, որին FIDH-ը և ՔՀԻ-ն անդրադարձել են բազմաթիվ առիթներով, անփոփոխ է մնում, և մինչ օրս ոչ մեկ պատասխանատվության առաջ չի կանգնեցվել նրա մահվան համար:

Լևոն Գուլյանը 2007 թվականի մայիսի 12-ին որպես վկա կանչվել է ՀՀ Ոստիկանության Շենգավիթի բաժին, հետո տեղափոխվել ՀՀ Ոստիկանության շենք: Մի քանի ժամ անց նրա ընտանիքի անդամները տեղեկացան, որ Լևոնը մահացել է: Երկու տարի անարդյունավետ հետաքննությունից հետո, 2009թ. ապրիլի 16-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը երկրորդ անգամ կարճեց Լևոն Գուլյանի մահվան առիթով հարուցված քրեական գործը՝ «հանցակազմի բացակայության» հիմքով: Ոչ մի պաշտոնյա պատասխանատվության առաջ չի կանգնեցվել Հայաստանի Ոստիկանության բաժնում մահվան դեպքի համար:

Մաշա Դավթյանի գործը

2008թ. սեպտեմբերին քրեական գործ էր հարուցվել Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր գյուղում բնակվող անչափահաս աղջկա բռնաբարության փաստի կապակցությամբ: 2009թ. փետրվարի 6-ին գործը կասեցվել էր՝ հանցագործի անձը պարզված չլինելու հիմքով: 2009թ. մայիսին դատական այս գործի քննությունը վերսկսվեց այլ քննիչի կողմից: Մաշա Դավթյանը՝ աղջկա հայրը, մեղադրվում էր իր դուստր Շ.Դ.-ին

⁷ Արդար դատաքննության իրավունքի իրականացումը Հայաստանում՝ Նախնական եզրակացություններ 2008թ. մարտի գործերով դատավարությունների դիտորդության և օրենսդրական վերջին փոփոխությունների հիման վրա, FIDH և ՔՀԻ-ի համատեղ փաստաթուղթ, Հունիս 26, 2009, <http://hra.am/am/point-of-view/2009/06/26/fairtrial>

⁸ Նույն փաստաթուղթը

բռնաբարելու և իր երկու դուստրերին՝ Շ.Դ-ին և Թ.Դ-ին խոշտանգելու համար՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 138.2 (3) և 119.2 (1) հոդվածներով:

2009թ. օգոստոսին Շ.Դ.-ն և Թ.Դ.-ն հրաժարվեցին իրենց ցուցմունքներից և բողոք ներկայացրեցին ՀՀ Գլխավոր Դատախազություն: Շ.Դ.-ն, ում 18 տարին լրացել է 2009թ. ապրիլին, դատական նիստերից մեկի ժամանակ հայտնեց, թե ինչպես են այդ ցուցմունքները նրանից կորզել: Նա հաղորդեց, որ իրեն և իր քրոջը՝ Թ.Դ.-ին, Կենտրոն ոստիկանություն են տարել 2009 թ. մայիսի 7-ին և չորս օր շարունակ ենթարկել են խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ստիպել են ցուցմունքներ տալ, որ Սաշա Դավթյանն իսկապես խոշտանգել է և բռնաբարել է Շ.Դ.-ին: Ֆիզիկական բռնությունների արդյունքում կորզված ցուցմունքները դրվել են մեղադրանքի հիմքում: Սաշա Դավթյանին նույնպես պարբերաբար ծեծի և խոշտանգումների են ենթարկել:

FIDH-ի նախագահ Սուեր Բելասենը, ով 2010թ. փետրվարի 5-ին, Քաղաքացիական հասարակության ինստիտուտի (ԲՀԻ) նախագահ Արման Դանիելյանի հետ այցելել է քրեակատարողական հիմնարկ, արձանագրեց, որ Սաշա Դավթյանը ենթարկվել է արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, և 8 ատամները կտորվել են ծեծի արդյունքում: Նրանք նաև հանդիպել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ղեկավարի և բժշկի հետ, ով ներկայացրել է բժշկական փաստաթղթերը՝ հաստատելով, որ քրեակատարողական հիմնարկ ընդունելիս պրն. Դավթյանը շատ վատ առողջական վիճակ է ունեցել:

2009թ. դեկտեմբերի 17-ին Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանն արդարացրեց Սաշա Դավթյանին՝ իր դատերը բռնաբարելու մեղադրանքի մասով: Սակայն, չնայած այն բանի, որ նա և իր դուստրերն ակնհայտորեն ենթարկվել էին ֆիզիկական ճնշումների, դատարանը նրան մեղավոր ճանաչեց իր դուստրերին խոշտանգելու համար և 4 տարվա ազատազրկման են դատապարտեց 119.2 (1) հոդվածի հիման վրա:

2010թ. փետրվարի 26-ին Վերաքննիչ դատարանը 1 տարով նվազեցրեց նրա ազատազրկման ժամկետը՝ թողնելով 3 տարի: Սաշա Դավթյանի նկատմամբ կիրառվեց 2009թ. հունիսի 19-ին Ազգային ժողովի կողմից ընդունված համաներման մասին որոշումը և նրան անմիջապես ազատ արձակեցին:

Սաշա Դավթյանի և նրա դուստրերի նկատմամբ խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի կապակցությամբ քննությունը դեռևս չի բացվել:

Ազատազրկման պայմանները

Հայաստանի քրեակատարողական համակարգում իրականացվել են բարեփոխումներ, որոնք ուղղված են Խորհրդային ժամանակաշրջանի գաղութային համակարգից դեպի Եվրոպական բանտային համակարգ անցնելուն: Սակայն առկա են խնդիրներ, որոնք կապված են այդ անցման շրջանի, ինչպես նաև կայացած «բացասական ավանդույթների» հետ, ինչն առաջացնում է մեր կազմակերպությունների մտահոգությունը: Մասնավորապես, համակարգի փոփոխությունները պահանջում են նաև շենքային պայմանների փոփոխություն: Դեռևս գոյություն ունեն բանտեր, որոնց ֆիզիկական պայմանները չեն համապատասխանում թե՛ Հայաստանի օրենսդրությանը,

թե՛ միջազգային չափանիշներին: ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2008 թ. տարեկան զեկույցում⁹ մատնանշված են մտահոգությունն առաջացնող հիմնական խնդիրները, որոնց թվում են պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը և բանտերի գերբնակեցումը, խոշտանգումների և դաժան վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության պակասը, սննդի և բուժօժանոթայության ոչ բավարար մակարդակը Հայաստանի քրեակատարողական համակարգում:

Անչափահասների գործերով արդարադատությունը

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի իրականացման վերաբերյալ Հայաստանի նախնական զեկույցը պատրաստվել էր 1994–ին, և Երեխայի իրավունքների կոմիտեն ուսումնասիրել էր 2000 թ.¹⁰ Երկրորդ զեկույցը ներկայացվել էր 2002–ին և ուսումնասիրվել 2004–ին:¹¹ Երկու դեպքերում էլ կոմիտեն մտահոգություն էր հայտնել «անչափահասների գործերով արդարադատության համակարգի բացակայության, մասնավորապես՝ հատուկ օրենքների, ընթացակարգերի և անչափահասների գործերով դատարանների վերաբերյալ»:¹² Թեպետ մի շարք փոփոխություններ են տեղի ունեցել օրենսդրության և կիրառման ոլորտում, առկա են մի շարք մտահոգիչ խնդիրներ: Մասնավորապես, նախնական կալանքի լայն կիրառումը և ազատազրկման ոչ բավարար պայմանները, միջնակարգ կրթության ընդհատումը նախնական կալանքի ընթացքում, ազատվելուց հետո անչափահասների համար հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի բացակայությունը, ինչպես նաև գործնականում այլընտրանքային պատիժների մշակված և արդյունավետ համակարգի բացակայությունը:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովներ

2009 թ. մարտին¹³ Հայաստանյան ՀԿ–ների մի խումբ իր մտահոգությունն արտահայտեց Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների գործունեության թափանցիկության բացակայության վերաբերյալ: Այդ հանձնաժողովների որոշումները, որոնք հիմնված չեն հստակ չափորոշիչների վրա, ըստ ստացված տեղեկությունների ակնհայտորեն քաղաքական դրդապատճառներ ունեն: Ավելին, ՀԿ–ների խումբը հայտնաբերել է երեք հիմնական խնդիր: Առաջինն, որոշումներ կայացնելու չափորոշիչները հստակորեն չեն սահմանված հանձնաժողովների գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ, ինչը լուրջ ազդեցություն է ունենում

⁹ http://hra.am/documents/PMG_Report_2008_arm.pdf

¹⁰ CRC/C/28/Add.9; CRC/C/15/Add.119

¹¹ CRC/C/93/Add.6; CRC/C/15/Add.225

¹² CRC/C/15/Add.119, para.56 and CRC/C/15/Add.225, para.70

¹³ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի, Հելսինկյան քաղաքացիական անսամբլեայի Վանաձորի գրասենյակի, Հայաստանի Հելսինկյան կոմիտեի, Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի և Ընդդեմ իրավական կամայականության հիմնադրամի համատեղ հայտարարություն, 2009 թ. մարտի 25, <http://www.hra.am/am/point-of-view/2009/03/25/19408>

որոշումների թափանցիկության վրա: Երկրորդ. հանձնաժողովների որոշումները ենթակա չեն բողոքարկման: Երրորդ. հանձնաժողովների կազմն ինքնին մտահոգիչ է, քանի որ հանձնաժողովների կազմում ընդգրկված են ուստիկանության, ազգային անվտանգության, քրեակատարողական համակարգի ներկայացուցիչներ և բոլոր հանձնաժողովների ղեկավարները նույնպես այդ կառույցների ներկայացուցիչներ են:

Ի վերացումն մահապատժի ՄԱԿ–ի կամընտիր արձանագրության վավերացումը

Հայաստանը երբևիցե չի իրականացրել մահապատիժներ, և Հայաստանի Հանրապետությունում մահապատիժն արգելվում է: Որպես Եվրախորհրդի անդամ՝ Հայաստանը վավերացրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի No. 6 Արձանագրությունը և ստորագրել է նույն Կոնվենցիայի No. 13 արձանագրությունը, որն արգելում է մահապատժի կիրառումը ցանկացած հանգամանքներում: Հայաստանն արդեն իսկ կատարել է իր պարտավորությունները, որոնք բխում են Ի վերացումն մահապատժի ՄԱԿ–ի արձանագրության վավերացումից, այսինքն 1993–ին միացել է Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրին, արգելել է մահապատիժը և վերացրել մահապատիժը որպես պատժատեսակ ազգային քրեական օրենսդրությունից: Այսպիսով, Հայաստանը կարող է միանալ Արձանագրությանը, ինչը յուրահատուկ և խորհրդանշական քայլ կհանդիսանա՝ մահապատիժն արգելող երկրների կողմից Արձանագրությունը վավերացնելու ուղղությամբ:

Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության վավերացումը

Մեր կազմակերպությունները կոչ են անում Հայաստանի Հանրապետությանը վավերացնել Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը:

Առաջարկություններ

- Իրականացնել լիարժեք և անկախ քննություն 2008 մարտի 1–ի իրադարձությունների հետևանքով 10 մահվան դեպքերի վերաբերյալ:
- Անհապաղ ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին:
- Ձեռնարկել միջոցներ նախնական կալանքի կիրառումը ազգային օրենսդրությանը և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ, մասնավորապես կիրառելով նախնական կալանքը որպես բացառություն:
- Չօգտագործել դաժան վերաբերմունքի կամ խոշտանգումների միջոցով ստացված ապացույցները քրեական գործերի շրջանակներում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի և ՄԱԿ–ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի մասին կոնվենցիայի 15 –րդ հոդվածի համաձայն:
- Մշակել մեխանիզմներ, որոնք թույլ կտան ստանալ օբյեկտիվ ապացույցներ և նվազեցնել վկաների ցուցմունքների և ինքնախոստովանությունների վրա չափից ավելի հիմնվելը:
- Այն դեպքերում, երբ կասկածյալների դեմ ապացույցները ձեռք են բերվել

- անօրինական մեթոդների միջոցով, ձեռնարկել անհրաժեշտ քայլեր այդ մեթոդները կիրառողներին պատասխանատվության ենթարկելու համար՝ 1990թ. ՄԱԿ-ի Դատախազների դերի վերաբերյալ ուղենիշներին համապատասխան:
- Ապահովել իր վերաբերյալ դատաքննության ժամանակ ներկա գտնվելու, իրեն անձամբ կամ պաշտպանի միջոցով պաշտպանության մեղադրյալի իրավունքը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի և Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի համաձայն:
 - Երաշխավորել արդար դատաքննության իրավունքի իրականացումը և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն այդ ուղղությամբ:
 - Ապահովել Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի և ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի մասին կոնվենցիայի դրույթների լիարժեք կիրառումը: Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ներառյալ իրավական, տեխնիկական և մասնագիտական ռեսուրսների բարելավումը, որպեսզի ոստիկանության կողմից խոշտանգումները և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը բացառվի:
 - Լիարժեք և անկողմնակալ քննություն իրականացնել խոշտանգումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին բոլոր դեպքերի կապակցությամբ, մասնավորապես Լևոն Գուլյանի, Սաշա Դավթյանի և իր դուստրերի, ինչպես նաև Արշալույս Հակոբյանի գործերով: Պատասխանատվության առաջ կանգնեցնելով բոլոր մեղավոր անձինք պետք է ենթարկվեն պատասխանատվության:
 - Բոլոր անհրաժեշտ քայլերը ձեռնարկել՝ ազատագրկման վայրերի պայմանները բարելավելու ուղղությամբ՝ համապատասխանեցնելով դրանք ազգային և միջազգային չափանիշներին:
 - Իրականացնել ՀՀ Արդարադատության Նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2008թ. հաշվետվությունում ներկայացված առաջարկությունները:
 - Ստեղծել անչափահասների արդարադատության համակարգ՝ սահմանափակելով նախնական կալանքի ժամկետները: Վերանայել անչափահաս կալանավորվածների պահելու վայրերի պայմանները, ընձեռել նախնական կալանքի ընթացքում միջնակարգ կրթության հնարավորություն, քայլեր ձեռնարկել հասարակությանը անչափահասների ինտեգրման արդյունավետ ծրագրեր մշակելու ուղղությամբ:
 - Վերանայել Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը՝ դրա առավել թափանցիկությունը ապահովելու համար:
 - Համապատասխանեցնել Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված «խոշտանգում» սահմանումը ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 1 հոդվածի սահմանմանը:
 - Վավերացնել Ի վերացումն մահապատժի ՄԱԿ-ի կամընտիր արձանագրությունը:

- Վավերացնել Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը: